ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12 Հեռ. (+ 374 12) 80-80-83
Էլ.փոստ/ E-mail info@ncdc.am

23.01.2023 N ԱՎ/01/08.4/33-23

«ՊՐՈ-ՄԵԴ ՊԼՈՒՍ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Կ.ԱՂԱՄԱԼՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ԱՆ «ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՊՐՈ-ՄԵԴ ՊԼՈՒՍ» ՍՊ ընկերության միջև 2022թ. մարտի 16-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-22-01» պայմանագրի շրջանակներում մատակարարը պարտավորվել էր մատակարարել Անձեռոցիկներ ԿԱՊ - երում (ՊՇՌ լաբորատորիայում) իրերի և սարքերի ախտահանման համար MC-CP-31, սակայն նշված ապրանքը չի մատակարարվել:

«ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՊՐՈ-ՄԵԴ ՊԼՈՒՍ» ՍՊ ընկերությունը բազմիցս ինչպես բանավոր, այնպես էլ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացվել է չմատակարարված ապրանքի ժամկետների խախտման և հետևանքների վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ինչպես նաև 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ հայտնում եմ, որ ԱՆ «ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-22-01» պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում

է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը՝ համապատասխանաբար՝ 146 900 / մեկ հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ և 220 350 / երկու հարյուր քսան հազար երեք հարյուր հիսուն / ՀՀ դրամ, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար՝ 146 900 և 220 350 ՀՀ դրամ գանձելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՆՅԱՆ

Կատարող՝ Սիրանուշ Պապիկյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հեռ. 012-80-80-83 (6014)